Տ. ՍՏԵՓԱՆՈՍ ՔԱՀԱՆԱ ՄԱՐԳԱՐՅԱՆ

(ավազանի անունը՝ Գուրգեն)

Ծնվել է 1964 թ. փետրվարի 16-ին Էջմիածնի շրջանի Արտիմետ գյուղում:

1971-1979 թթ. սովորել է տեղի միջնակարգ դպրոցում:

1979-1983 թթ. սովորել է Երևանի քիմիա-տեխնոլոգիական տեխնիկումում և ստացել գազի ցանցի մասնագետի որակավորում:

1983-1985 թթ. ծառայել է Խորհրդային բանակում:

1985-1987 թթ. աշխատել է Երևանի վիտամինների գործարանում:

1987-1989 թթ. աշխատել է Երևանի «Ավտոագրեգատ» գործարանում:

1990-1997 թթ. աշխատել է Անշարժ գույքի գործակալությունում:

1994-1999 թթ. սովորել է Երևանի Հրաչյա Աճառյան համալսարանի տնտեսագիտական ֆակուլտետում և ստացել տնտեսագետ մենեջերի որակավորում:

1997-2001 թթ. աշխատել է Էջմիածնի «Ռաստր» գործարանում:

2003-2005 թթ. ուսանել է Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի Քահանայից պատրաստման լսարանում:

2005 թ. սեպտեմբերի 11-ին՝ Ս. Խաչվերացի տոնին, ձեռամբ Գերաշնորհ Տ. Առաքել եպիսկոպոս Քարամյանի, ձեռնադրվել է սարկավագ:

2005 թ. սեպտեմբերի 18-ին, ձեռամբ Գերաշնորհ Տ. Վիգեն եպիսկոպոս Այքազյանի, ձեռնադրվել է ամուսնացյալ քահանա:

Ամուսնացած է, ունի մեկ որդի: